# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2005թ. սեպտեմբերին

**/վերլուծություն/**

2005թ. սեպտեմբերին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 10421 գործարքներ, որոնց քանակը 2004թ. սեպտեմբերի համեմատ աճել է 29.3%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 39.4%-ով, որը հիմնականում պայմանավորվել է 2005թ. օգոստոսին անշարժ գույքի օրինականացման գործընթացի ակտիվացմամբ, մասնավորապես ինքնակամ կառուցված 8129 միավոր շենքերի, շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցմամբ:

2005թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2005թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2005թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3827 օտարման գործարքների 86.5%-ը կազմել են առուվաճառքները, 13.2%-ը՝ նվիրատվությունները և 0.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 42.0%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 41.2%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2005թ. սեպտեմբերին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2004թ. սեպտեմբերի համեմատ աճել է 17.5%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 9.7%-ով: 2005թ. սեպտեմբերին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 61.8%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2004թ. սեպտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.3%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ աճել՝ 5.4%-ով:

2005թ. սեպտեմբերին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

/1ԱՄՆ դոլարը 2005թ. սեպտեմբերին համարժեք է 454.4դրամին/

| Համայքներ | Նվազագույն և առավելագույն գները 2005թ. սեպտեմբերին /ՀՀ դրամ/ | Միջին գները /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | սեպտեմբեր 2004թ. | սեպտեմբեր 2005թ. | օգոստոս 2005թ. |
| Կենտրոն | 159000.0-440800.0 | 246100.0 | 303800.0 | 302900.0 |
| Արաբկիր | 113600.0-318100.0 | 193600.0 | 250000.0 | 248100.0 |
| Քանաքեռ-Զեյթուն | 90900.0-227200.0 | 118800.0 | 151600.0 | 151700.0 |
| Նոր-Նորք | 90900.0-190800.0 | 102600.0 | 148700.0 | 147700.0 |
| Ավան | 81800.0-159000.0 | 98900.0 | 130100.0 | 129500.0 |
| Էրեբունի | 72700.0-181800.0 | 95700.0 | 130400.0 | 130900.0 |
| Շենգավիթ | 72700.0-204500.0 | 114200.0 | 156200.0 | 154900.0 |
| Դավթաշեն | 90900.0-204500.0 | 122300.0 | 157700.0 | 157600.0 |
| Աջափնյակ | 90900.0-204500.1 | 111800.0 | 148400.0 | 149300.0 |
| Մալաթիա-Սեբաստիա | 90900.0-204500.2 | 112200.0 | 144100.0 | 143300.0 |
| Նուբարաշեն | 54500.0-113600.0 | 42900.0 | 78600.0 | 79300.0 |
| Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/ | ***54500.0-440800.0*** | ***123600.0*** | ***163600.0*** | ***163200.0*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. սեպտեմբերին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճ չի նկատվել:

2005թ. սեպտեմբերին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 477 բնակարաններ, որոնց քանակը 2004թ. սեպտեմբերի համեմատ աճել է 2.0%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 4.8%-ով:

2005թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով հետևյալ շուկայական միջինացված գները և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր | Քաղաքներ | Նվազագույն և առավելագույն գները | Միջին գները /ՀՀ դրամ/ |
|---|---|---|---|

| | | 2005թ. սեպտեմբերին /ՀՀ դրամ/ | սեպտեմբեր 2004թ. | սեպտեմբեր 2005թ. | օգոստոս 2005թ. |
|---|---|---|---|---|---|
| Արագածոտն | Աշտարակ | 36400.0-72700.0 | 34600 | 49000.0 | 49200.0 |
| | Ապարան | 13600.0-27300.0 | 19400 | 21900.0 | 22000.0 |
| | Թալին | 11400.0-25000.0 | 16300 | 21600.0 | 21500.0 |
| Արարատ | Արտաշատ | 25000.0-50000.0 | 29000 | 37500.0 | 37100.0 |
| | Մասիս | 36400.0-68200.0 | 32300 | 49800.0 | 49600.0 |
| | Վեդի | 22700.0-45400.0 | 21900 | 32300.0 | 32600.0 |
| | Արարատ | 20400.0-45400.0 | 21000 | 36200.0 | 36100.0 |
| Արմավիր | Վաղարշապատ | 50000.0-95400.0 | 52200 | 72600.0 | 73200.0 |
| | Արմավիր | 27300.0-59100.0 | 33100 | 43600.0 | 43200.0 |
| | Մեծամոր | 18200.0-36400.0 | 16700 | 24100.0 | 23600.0 |
| Գեղարքունիք | Սևան | 18200.0-40900.0 | 17900 | 29400.0 | 29400.0 |
| | Գավառ | 13600.0-29500.0 | 17200 | 21400.0 | 21200.0 |
| | Մարտունի | 22700.0-68200.0 | 18800 | 35500.0 | 35700.0 |
| | Վարդենիս | 9100.0-25000.0 | 9000 | 18500.0 | 18300.0 |
| | Ճամբարակ | 5900.0-20400.0 | 9200 | 10300.0 | 10000.0 |
| Լոռի | Վանաձոր | 27300.0-47700.0 | 32100 | 38900.0 | 39200.0 |
| | Ստեփանավան | 15900.0-29500.0 | 18800 | 21700.0 | 21800.0 |
| | Սպիտակ | 18200.0-45400.0 | 20900 | 25600.0 | 25500.0 |
| | Ալավերդի | 9100.0-22700.0 | 13600 | 17800.0 | 17700.0 |
| | Տաշիր | 11400.0-25000.0 | 13100 | 19600.0 | 19700.0 |
| | Թումանյան | 4100.0-11400.0 | 5000 | 5300.0 | 5300.0 |
| | Շամլուղ | 2300.0-8400.0 | 2800 | 2800.0 | 2800.0 |
| | Ախթալա | 6800.0-16100.0 | 10300 | 10400.0 | 10600.0 |
| Կոտայք | Աբովյան | 45400.0-90900.0 | 51600 | 75500.0 | 76100.0 |
| | Նոր Հաճն | 40900.0-63600.0 | 36200 | 55100.0 | 55600.0 |
| | Բյուրեղավան | 22700.0-50000.0 | 25000 | 34400.0 | 34000.0 |
| | Եղվարդ | 31800.0-59100.0 | 25900 | 45600.0 | 46000.0 |
| | Հրազդան | 20400.0-40900.0 | 21900 | 27700.0 | 28000.0 |
| | Ծաղկաձոր | 18200.0-68200.0 | 45500 | 54400.0 | 54800.0 |
| | Չարենցավան | 25000.0-38600.0 | 21300 | 34400.0 | 34500.0 |
| Շիրակ | Գյումրի | 27300.0-54500.0 | 39100 | 40900.0 | 41400.0 |
| | Արթիկ | 15900.0-31800.0 | 16100 | 25000.0 | 25000.0 |
| | Մարալիկ | 8200.0-31800.0 | 14600 | 21600.0 | 21100.0 |
| Սյունիք | Գորիս | 20400.0-59100.0 | 19200 | 43500.0 | 43300.0 |
| | Կապան | 22700.0-36400.0 | 17300 | 31100.0 | 31300.0 |
| | Սիսիան | 18200.0-40900.0 | 18300 | 26400.0 | 26500.0 |
| | Մեղրի | 13600.0-34100.0 | 13100 | 21200.0 | 20700.0 |
| | Ագարակ | 9100.0-27300.0 | 12900 | 17400.0 | 17600.0 |
| | Քաջարան | 9100.0-22700.0 | 10200 | 16700.0 | 16900.0 |
| | Դաստակերտ | 4500.0-11400.0 | 6700 | 6400.0 | 6500.0 |
| Վայոց Ձոր | Վայք | 13600.0-36400.0 | 20100 | 28600.0 | 28600.0 |
| | Եղեգնաձոր | 25000.0-59100.0 | 25800 | 40800.0 | 40800.0 |
| | Ջերմուկ | 36400.0-81800.0 | 28500 | 44300.0 | 44000.0 |
| Տավուշ | Դիլիջան | 18200.0-50000.0 | 22300 | 31900.0 | 32200.0 |
| | Իջևան | 27300.0-72700.0 | 27200 | 36800.0 | 36400.0 |
| | Բերդ | 18200.0-45400.0 | 17200 | 25400.0 | 25300.0 |
| | Նոյեմբերյան | 9100.0-22700.0 | 14200 | 14300.0 | 14300.0 |

2005թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճ չի նկատվել:

2005թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 485 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 133, մյուս մարզերում միասին վերցրած՝ 352: 2004թ. սեպտեմբերի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը աճել է 14.7%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 20.9%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 12.5%-ով: 2005թ. օգոստոսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 12.8%-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 17.7%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 11.0%-ով:

2005թ. սեպտեմբերին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

| Համայնքներ | Նվազագույն և առավելագույն գները 2005թ. սեպտեմբերին /ՀՀ դրամ/ | Միջին գները /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | սեպտեմբեր 2004թ. | սեպտեմբեր 2005թ. | օգոստոս 2005թ. |
| Կենտրոն | 136300.0-908800.0 | 246400.0 | 331500.0 | 330300.0 |
| Արաբկիր | 90900.0-454400.0 | 197500.0 | 265700.0 | 264900.0 |
| Քանաքեռ-Զեյթուն | 68200.0-272600.0 | 119000.0 | 158100.0 | 159000.0 |
| Նորք-Մարաշ | 90900.0-454400.0 | 174600.0 | 182100.0 | 183400.0 |
| Ավան | 90900.0-363500.0 | 99300.0 | 136800.0 | 137300.0 |
| Էրեբունի | 68200.0-227200.0 | 96300.0 | 136400.0 | 135500.0 |
| Շենգավիթ | 68200.0-204500.0 | 114800.0 | 160900.0 | 158600.0 |
| Դավթաշեն | 90900.0-409000.0 | 122700.0 | 163600.0 | 162500.0 |
| Աջափնյակ | 68200.0-272600.0 | 112300.0 | 156600.0 | 157500.0 |
| Մալաթիա-Սեբաստիա | 68200.0-409000.0 | 112800.0 | 147200.0 | 147900.0 |
| Նուբարաշեն | 36400.0-113600.0 | 43000.0 | 87000.0 | 87600.0 |
| Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/ | ***36400.0-908800.0*** | ***130800.0*** | ***175100.0*** | ***175000.0*** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2005թ. սեպտեմբերին անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճ չի նկատվել:

2005թ. սեպտեմբերին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 քմ և տնամերձի 1000.0 քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, և դրանց փոփոխման միջակայքերը.

| Մարզեր | Քաղաքներ | Նվազագույն և առավելագույն գները 2005թ. սեպտեմբերին /ՀՀ դրամ/ | Միջին գները /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | սեպտեմբեր 2004թ. | սեպտեմբեր 2005թ. | օգոստոս 2005թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 27300.0-81800.0 | 44500.0 | 50300.0 | 50400.0 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ապարան | 13600.0-36400.0 | 20000.0 | 23800.0 | 23500.0 |
| | Թալին | 13600.0-36400.0 | 17900.0 | 22900.0 | 23300.0 |
| Արարատ | Արտաշատ | 22700.0-50000.0 | 31900.0 | 38300.0 | 38400.0 |
| | Մասիս | 22700.0-68200.0 | 32600.0 | 51300.0 | 51100.0 |
| | Վեդի | 13600.0-40900.0 | 25400.0 | 33600.0 | 33700.0 |
| | Արարատ | 13600.0-45400.0 | 22900.0 | 37200.0 | 37500.0 |
| Արմավիր | Վաղարշապատ | 36400.0-81800.0 | 54200.0 | 74300.0 | 74300.0 |
| | Արմավիր | 22700.0-59100.0 | 33500.0 | 45300.0 | 44900.0 |
| Գեղարքունիք | Սևան | 9100.0-40900.0 | 21100.0 | 32100.0 | 31500.0 |
| | Գավառ | 9100.0-36400.0 | 20500.0 | 22800.0 | 22300.0 |
| | Մարտունի | 13600.0-45400.0 | 21000.0 | 37400.0 | 37600.0 |
| | Վարդենիս | 9100.0-31800.0 | 10900.0 | 21100.0 | 21100.0 |
| | Ճամբարակ | 4500.0-22700.0 | 10400.0 | 11000.0 | 11200.0 |
| Լոռի | Վանաձոր | 22700.0-50000.0 | 36000.0 | 40300.0 | 40400.0 |
| | Ստեփանավան | 13600.0-36400.0 | 22100.0 | 27000.0 | 27200.0 |
| | Սպիտակ | 13600.0-36400.0 | 22000.0 | 26700.0 | 27100.0 |
| | Ալավերդի | 9100.0-31800.0 | 14300.0 | 18400.0 | 18600.0 |
| | Տաշիր | 9100.0-31800.0 | 13500.0 | 20800.0 | 21100.0 |
| | Թումանյան | 4500.0-18200.0 | 5600.0 | 6700.0 | 6700.0 |
| | Շամլուղ | 2300.0-13600.0 | 3900.0 | 4100.0 | 4200.0 |
| | Ախթալա | 9100.0-22700.0 | 11100.0 | 12000.0 | 12000.0 |
| Կոտայք | Աբովյան | 31800.0-90900.0 | 52200.0 | 78700.0 | 79200.0 |
| | Նոր Հաճն | 18200.0-68200.0 | 37100.0 | 56700.0 | 57500.0 |
| | Բյուրեղավան | 18200.0-45400.0 | 25200.0 | 35900.0 | 36000.0 |
| | Եղվարդ | 22700.0-63600.0 | 26800.0 | 49900.0 | 48600.0 |
| | Հրազդան | 18200.0-40900.0 | 23000.0 | 30100.0 | 30100.0 |
| | Ծաղկաձոր | 31800.0-68200.0 | 49300.0 | 56100.0 | 56900.0 |
| | Չարենցավան | 18200.0-45400.0 | 21600.0 | 38300.0 | 36800.0 |
| Շիրակ | Գյումրի | 27300.0-59100.0 | 47000.0 | 43500.0 | 44100.0 |
| | Արթիկ | 9100.0-40900.0 | 17000.0 | 27800.0 | 27200.0 |
| | Մարալիկ | 13600.0-36400.0 | 15100.0 | 23700.0 | 24000.0 |
| Սյունիք | Գորիս | 18200.0-59100.0 | 19700.0 | 44400.0 | 44800.0 |
| | Կապան | 13600.0-40900.0 | 18200.0 | 33900.0 | 32800.0 |
| | Սիսիան | 9100.0-40900.0 | 18800.0 | 28200.0 | 28300.0 |
| | Մեղրի | 13600.0-36400.0 | 14500.0 | 23600.0 | 22800.0 |
| | Ագարակ | 9100.0-36400.0 | 14500.0 | 19700.0 | 19900.0 |
| | Դաստակերտ | 4500.0-18200.0 | 7500.0 | 8700.0 | 8800.0 |
| Վայոց Ձոր | Վայք | 9100.0-36400.0 | 20300.0 | 30200.0 | 30400.0 |
| | Եղեգնաձոր | 18200.0-59100.0 | 25800.0 | 44800.0 | 42500.0 |
| | Ջերմուկ | 13600.0-40900.0 | 22700.0 | 30200.0 | 30200.0 |
| Տավուշ | Դիլիջան | 13600.0-45400.0 | 26000.0 | 33200.0 | 33700.0 |
| | Իջևան | 18200.0-45400.0 | 28100.0 | 38200.0 | 37700.0 |
| | Բերդ | 9100.0-40900.0 | 17200.0 | 26400.0 | 26300.0 |
| | Նոյեմբերյան | 9100.0-31800.0 | 15900.0 | 15100.0 | 14400.0 |

2005թ. սեպտեմբերին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գների, ներառյալ տնամերձի միավորի գինը, ամսեկան աճ չի նկատվել:

Ընդհանուր առմամբ, 2005թ. սեպտեմբերին հանրապետությունում օտարվել են 656.14 հա /այդ թվում՝ 16.70 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 580.20 հա կազմել են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 643.76 հա հողերի /այդ թվում՝ 14.59 հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 573.49 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 12.21 հա /այդ թվում՝ 2.11 հա Երևանում/ հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 6.71 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

Օտարված 0.16 հա բնակավայրերի հողերի նկատմամբ իրականացվել են փոխանակության գործարքներ:

Հողերի առուվաճառքների առավել մեծ մակերեսներ արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 282.31 հա, որից 264.89 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2005թ. սեպտեմբերին մարզերում հողերի առուվաճառքի քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների և հատուկ պահպանվող տարածքների հողերը.

| ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | *Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող* | | | | | | *Մասնավոր սեփականություն հանդիսացող* | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանա-ության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանա-ության հողերի | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ . հողերի | | | | բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ . հողերի | |
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ | Միավորների քանակը | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 23 | 1.82 | 10 | 0.99 | 0 | 0.00 | 89 | 8.68 | 15 | 3.11 |
| Արագածոտն | 7 | 107.90 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 39 | 17.26 | 30 | 2.83 | 1 | 0.01 |
| Արարատ | 15 | 23.81 | 28 | 2.33 | 8 | 0.33 | 64 | 19.84 | 61 | 5.79 | 0 | 0.00 |
| Արմավիր | 55 | 160.68 | 0 | 0.00 | 8 | 0.28 | 106 | 104.22 | 47 | 4.23 | 2 | 0.06 |
| Գեղարքունիք | 0 | 0.00 | 2 | 0.12 | 1 | 0.24 | 9 | 12.71 | 10 | 1.49 | 1 | 0.24 |
| Լոռի | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.004 | 24 | 17.35 | 7 | 0.66 | 1 | 0.01 |
| Կոտայք | 22 | 31.57 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 76 | 21.69 | 163 | 15.62 | 1 | 0.53 |
| Շիրակ | 6 | 1.56 | 15 | 0.38 | 3 | 0.02 | 8 | 20.93 | 10 | 0.63 | 0 | 0.00 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 17 | 17.73 | 1 | 0.05 | 0 | 0.00 |
| Վայոց Ձոր | 1 | 7.00 | 0 | 0.00 | 3 | 2.41 | 3 | 0.45 | 6 | 0.93 | 0 | 0.00 |
| Տավուշ | 1 | 0.32 | 1 | 0.08 | 1 | 0.01 | 10 | 8.50 | 2 | 0.08 | 0 | 0.00 |
| **Ընդամենը** | **107** | **332.84** | **69** | **4.73** | **36** | **4.28** | **356** | **240.68** | **426** | **40.99** | **21** | **3.96** |

2005թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են 1026 միավոր հողերի առուվաճառքի գործարքներ /2004թ սեպտեմբերին՝ 879/ այդ թվում 463-ը՝ գյուղատնտեսական նշանակության /433/, 552-ը՝ բնակավայրերի /444/, 8-ը՝ արդյունաբերական օբյեկտների /2/, 3-ը՝ հատուկ պահպանվող տարածքների :

2005թ. սեպտեմբերին հողերի առուվաճառքներից 189 միավորը իրականացվել են աճուրդների միջոցով /2004թ սեպտեմբերին՝ 232/, այդ թվում 15-ը՝ /1.21 հա/ Երևանում /59/, իսկ 174-ը՝ /338.53 հա/ մյուս մարզերում /173/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 106 միավորը /332.42 հա/ հանդիսացել է գյուղատնտեսական /2004թ սեպտեմբերին՝ 132/, 60-ը՝ /4.09 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/ /86/, 21-ը՝ /2.83 հա/ հասարակական կառուցապատման /14/ և 2-ը՝ /0.41 հա/ արդյունաբերական օբյեկտների հողեր:

2005թ. սեպտեմբերին, հանրապետությունում արձանագրված 463 միավոր գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքներից 106-ը իրականացվել են աճուրդների, 1-ը՝ դատարանի վճիռների և 1-ը՝ ուղղակի վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 7 | 107.90 | 34.1 | 799.7 | 247.6 | 32 | 12.32 | 363.5 | 6816.0 | 1976.6 |
| Ապարան | | | | | | | | 90.9 | 772.5 | 299.9 |
| Թալին | | | | | | 7 | 4.94 | 90.9 | 763.4 | 249.9 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 77.2 | 954.2 | 136.3 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 4 | 1.23 | 327.2 | 10137.7 | 3083.1 | 26 | 8.29 | 336.3 | 5452.8 | 1076.9 |
| Մասիս | | | | | | 17 | 4.63 | 181.8 | 6816.0 | 1335.9 |
| Վեդի | 11 | 22.58 | 38.6 | 154.5 | 122.7 | 20 | 6.24 | 204.5 | 4544.0 | 790.7 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 46 | 44.07 | 295.4 | 4089.6 | 668.0 |
| Բաղրամյան | 14 | 84.41 | 36.4 | 595.3 | 293.1 | 17 | 40.46 | 90.9 | 681.6 | 390.8 |
| Վաղարշապատ | 41 | 76.27 | 11.4 | 5461.9 | 481.7 | 43 | 19.68 | 445.3 | 9088.0 | 1145.1 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | | | 190.8 | 499.8 | 295.4 |
| Ճամբարակ | | | | | | 2 | 4.00 | 45.4 | 545.3 | 118.1 |
| Մարտունի | | | | | | 4 | 0.34 | 45.4 | 1817.6 | 427.1 |
| Սևան | | | | | | | | 45.4 | 454.4 | 174.9 |
| Վարդենիս | | | | | | 3 | 8.37 | 27.3 | 536.2 | 168.1 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | 4 | 2.47 | 163.6 | 2499.2 | 331.7 |
| Գուգարք | | | | | | | | 227.2 | 2726.4 | 849.7 |
| Սպիտակ | | | | | | | | 227.2 | 1499.5 | 472.6 |
| Ստեփանավան | | | | | | 13 | 9.61 | 90.9 | 2272.0 | 272.6 |
| Տաշիր | | | | | | 7 | 5.26 | 45.4 | 454.4 | 172.7 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | | | | | | 43 | 10.83 | 272.6 | 11360.0 | 2749.1 |
| Եղվարդ | | | | | | 27 | 8.98 | 172.7 | 11360.0 | 1885.8 |
| Հրազդան | 22 | 31.57 | 104.5 | 388.5 | 168.1 | 6 | 1.87 | 113.6 | 2726.4 | 654.3 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 2 | 2.44 | 249.9 | 1704.0 | 359.0 |
| Ամասիա | | | | | | 3 | 3.52 | 36.4 | 238.6 | 81.8 |
| Անի | | | | | | | | 109.1 | 363.5 | 181.8 |
| Աշոցք | | | | | | 3 | 14.97 | 45.4 | 113.6 | 95.4 |
| Արթիկ | 5 | 1.15 | 420.3 | 872.4 | 772.5 | | | 63.6 | 1090.6 | 154.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 12 | 4.94 | 90.9 | 727.0 | 290.8 |
| Կապան | | | | | | | | 54.5 | 908.8 | 204.5 |
| Մեղրի | | | | | | | | 181.8 | 1926.7 | 409.0 |
| Սիսիան | | | | | | 5 | 12.78 | 45.4 | 681.6 | 172.7 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 1 | 7.00 | 202.2 | 202.2 | 202.2 | 1 | 0.09 | 118.1 | 2726.4 | 1163.3 |
| Վայք | | | | | | 2 | 0.36 | 54.5 | 1545.0 | 454.4 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 45.4 | 908.8 | 309.0 |
| Իջևան | 1 | 0.32 | 520.3 | 520.3 | 520.3 | 3 | 5.60 | 240.8 | 1817.6 | 745.2 |
| Նոյեմբերյան | | | | | | 7 | 2.90 | 45.4 | 3789.7 | 381.7 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2005թ. սեպտեմբերին, հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրված 383 միավոր բնակելի կառուցապատման հողերի առուվաճառքներից 46-ը իրականացվել են աճուրդների, 5-ը՝ դատարանի վճիռների վաճառքների միջոցով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 28 | 24868.0 | 113.6 | 3635.2 | 1944.8 |
| Ապարան | | | | | | | | 113.6 | 636.2 | 159.0 |
| Թալին | | | | | | 1 | 2200.0 | 45.4 | 363.5 | 68.2 |
| Ծաղկահովիտ | | | | | | | | 45.4 | 363.5 | 63.6 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | 12 | 11776.0 | 143.1 | 431.7 | 202.2 | 14 | 15692.6 | 136.3 | 2726.4 | 708.9 |
| Մասիս | 16 | 11555.0 | 452.1 | 1086.0 | 767.9 | 39 | 33723.0 | 136.3 | 9088.0 | 881.5 |
| Վեդի | | | | | | 8 | 8500.0 | 113.6 | 999.7 | 518.0 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 13 | 13002.0 | 136.3 | 2272.0 | 840.6 |
| Բաղրամյան | | | | | | 1 | 1200.0 | 81.8 | 272.6 | 104.5 |
| Վաղարշապատ | | | | | | 31 | 26299.0 | 136.3 | 4544.0 | 1172.4 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 3 | 4707.0 | 136.3 | 908.8 | 304.4 |
| Ճամբարակ | 2 | 1150.0 | 115.9 | 154.5 | 134.0 | | | 45.4 | 136.3 | 72.7 |
| Մարտունի | | | | | | 2 | 3710.0 | 90.9 | 454.4 | 150.0 |
| Սևան | | | | | | 1 | 1200.0 | 90.9 | 908.8 | 118.1 |
| Վարդենիս | | | | | | 4 | 5310.0 | 45.4 | 227.2 | 68.2 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | | | | | | | | 68.2 | 272.6 | 95.4 |
| Գուգարք | | | | | | 5 | 4004.0 | 68.2 | 2362.9 | 468.0 |
| Սպիտակ | | | | | | 1 | 1290.0 | 63.6 | 454.4 | 100.0 |
| Ստեփանավան | | | | | | 1 | 1350.0 | 45.4 | 272.6 | 72.7 |
| Տաշիր | | | | | | | | 45.4 | 136.3 | 61.3 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | | | | | | 68 | 55750.0 | 136.3 | 6816.0 | 1435.9 |
| Եղվարդ | | | | | | 72 | 78225.0 | 136.3 | 6816.0 | 1563.1 |
| Հրազդան | | | | | | 21 | 20638.0 | 136.3 | 9088.0 | 990.6 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 8 | 2172.3 | 465.8 | 1679.0 | 1320.0 | 10 | 6261.5 | 113.6 | 1545.0 | 263.6 |
| Ամասիա | | | | | | | | 45.4 | 136.3 | 61.3 |
| Անի | | | | | | | | 68.2 | 181.8 | 84.1 |
| Աշոցք | | | | | | | | 40.9 | 136.3 | 54.5 |
| Արթիկ | 7 | 1660.0 | 38.6 | 899.7 | 420.3 | | | 68.2 | 931.5 | 118.1 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | | | 68.2 | 545.3 | 199.9 |
| Կապան | | | | | | | | 68.2 | 636.2 | 186.3 |
| Մեղրի | | | | | | | | 68.2 | 409.0 | 104.5 |
| Սիսիան | | | | | | 1 | 490.0 | 68.2 | 409.0 | 118.1 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 5 | 6704.0 | 68.2 | 1136.0 | 209.0 |
| Վայք | | | | | | 1 | 2600.0 | 77.2 | 636.2 | 102.2 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 45.4 | 636.2 | 77.2 |
| Իջևան | 1 | 750.0 | 220.4 | 220.4 | 220.4 | 2 | 800.0 | 68.2 | 1363.2 | 313.5 |
| Նոյեմբերյան | | | | | | | | 45.4 | 636.2 | 95.4 |

2005թ. սեպտեմբերին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 7 գործարքներ /որից 5-ը՝ գյուղատնտեսական նշանակության/ 2.92 հա մակերեսով, ընդ որում 6-ը՝ Արարատի /1.82 հա/ և 1-ը՝ Լոռու /1.10 հա/ մարզերում:

2005թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1000 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.6%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 28.0%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. սեպտեմբերի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 44.5%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 22.7%-ով:

2005թ. սեպտեմբերին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 33 բնակարանների, 19 անհատական բնակելի տների, 217 հասարակական, 16 արտադրական նշանակության օբյեկտների, 2 ավտոտնակի և 713 միավոր հողերի վարձակալության գործարքներ:

2005թ. սեպտեմբերին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 31 վարձակալության գործարքների քանակը 2004թ. սեպտեմբերի համեմատ նվազել է 27.9%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 11.4%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. սեպտեմբերին հանրապետությունում վարձակալվել են 1534.57 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 6.36 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1448.87 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 31.40 հա՝ բնակավայրերի, 24.54 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 7.02 հա՝ հատուկ պահպանվող տարածքների, 15.75 հա՝ էներգետիկայի օբյեկտների, 0.63 հա՝ ընդերքի օգտագործման համար նախատեսված հողեր: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 379.17 հա, որից 374.60 հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր մակերեսով՝ 9.24 հա, Տավուշի մարզում, որից 9.16 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 397.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2005թ. սեպտեմբերին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

| *Մարզի անվանումը* | *Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի* | | *Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական.նշ հողերի* | |
|---|---|---|---|---|
| | Վարձակալության գործարքների քանակները /միավոր/ | Վարձակալված հողերի մակերեսները /հա/ | Վարձակալության գործարքների քանակները /միավոր/ | Վարձակալված հողերի մակերեսները /հա/ |
| Արագածոտն | 0 | 0.00 | 66 | 320.50 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Արարատ | 6 | 195.00 | 27 | 179.60 |
| Արմավիր | 0 | 0.00 | 10 | 53.91 |
| Գեղարքունիք | 2 | 102.00 | 66 | 133.05 |
| Լոռի | 0 | 0.00 | 45 | 95.73 |
| Կոտայք | 0 | 0.00 | 22 | 33.31 |
| Շիրակ | 0 | 0.00 | 22 | 161.27 |
| Սյունիք | 1 | 100.00 | 4 | 23.40 |
| Վայոց Ձոր | 0 | 0.00 | 22 | 41.95 |
| Տավուշ | 0 | 0.00 | 13 | 9.16 |
| *Ընդամենը* | *9* | *397.00* | *297* | *1051.88* |

2005թ. սեպտեմբերին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 780 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.5%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2004թ. սեպտեմբերի համեմատ աճել է 35.2%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 0.1%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /43.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.2%/, առանձնատների /21.0%/ և հողերի /11.2%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 400 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. սեպտեմբերի համեմատ աճել է 32.9%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 15.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2005թ. սեպտեմբերին հանրապետությունում գրավադրվել են 80.55 հա /այդ թվում 2.13 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 75.96 հա՝ գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 28.82 հա, որից 28.17 հա՝ գյուղատնտեսական նշանակության, իսկ առավել փոքր՝ 0.10 հա, բնակավայրերի հողեր, Վայոց Ձորի մարզում:

2005թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են հասարական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար, 17 և 11 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2004թ. սեպտեմբերի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 2 անգամ, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ՝ 7.7%-ով: Մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Գեղարքունիքում՝ 28.6%:

2005թ. սեպտեմբերին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1589 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2004թ. սեպտեմբերի համեմատ աճել է 15.6%-ով, իսկ 2005թ. օգոստոսի համեմատ նվազել՝ 20.5%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.2%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /39.8%/:

*ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն*